# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ. — Ցեղին Սիրտը, Քերթուածներ. Բագինին վրայ. — Կրկէսին մէջ. — Դիւցազնավէպեր (1906–1909). Պոլիս 1910. Հրտրկ. Արծիւ Ժողովրդական Գրավաճառանոցի (Մատենաշար Ազգակ թիւ 3). Տպագր. Օ. Արզուման. գին Թուրքիոյ մէջ 9 ղրշ. Ռուսիա՝ 80 կոպէկ, Ամերիկա՝ 40 սէնդ, Եւրոպա և ուրիշ վայրեր՝ 2 ֆրանք։

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՑ. — Մամիկոնեան Առիւծը (Պօէմա). Ալէքսանդրապօլ 1909. տպ. Յ. Ղասապեանցի. գին 30 կ։

ՊԻՈՍ Ժ.ի Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏի Թուղթ Ցորդորանաց առ կաթողիկէ կղերն. Թրգմ. Աշակերտք Լեւոնեան Դպրոցի ի Հռովմ 1909. տպ. Վիեննա 1909.

ԳԷՈՐԳ–ՄԵՍՐՈՊ. — Հայ Թարգմանիչները Բիւզանդիոնի մէջ. պատմական թատերախաղ, մէկ արարուած. Պոլիս 1909. տպ. Ա. Շահէն. գին 60 փարա՝ ի նպաստ իզմիտի Կարմիր–Խաչի Արհեստանոցին։

ՄԱՐԳԱՐ. — Գողը. (Ջինւորի Յիշատակարանից). Թիֆլիս 1910. (Հրկրկ. «Ծիածան»ի N. 2). տպ. Էլեկտր. Օր. Ն. Աղանեանցի. գին 20 կ։

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպիր. — Կրօնի դասատուութիւնը։ Թիֆլիս. 1909. տպ. «Էպօխա». գին 40 կ։

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ. Հայոց Հին կրօնները. Պոլիս 1909. տպ. Յ. Մատթէոսեան. Բ. տպ. Սրբագրեալ և Յաւելեալ. գին 6 ղր։

ԲԺՇԿԱՊԵՏ Ա. ԲԱՐԱՅԵԱՆ. — Եկեղեցական Առողջապահութիւն. Թիֆլիս 1909. տպ. «Կուլտուրա». գին 50 կ։

Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ. — Ա. Տիմոթէոս Կուզ Հայ Մատենագրութեան մէջ։ — Հրաչեայ Աճառեան. — Բ. Հայերէն Նոր Բառեր Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ. Վիեննա 1909. տպ. Մխիթարեան. (Ազգային Մատենդրն. ԾԸ). գին ֆր. 1.50։

ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ՝ ըստ Պրօֆ. Օտտօ Շմայլի կազմեց. Խասագիրք Բնական Պատմութեան, Հայոց Դպրոցների համար. Մասն Ա. Մարդ կենդանի. (պտկրզրդ). Թիֆլիս 1909. տպ. Էլեկտ. Օր. Ն. Աղանեանցի. գին 70 կ։

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ. — Պատմութիւն Աղուանից Բ. Հատոր. Թիֆլիս 1907. տպ. Էլեկտր. Օր. Ն. Աղանեացի. գին 1 ր. 30 կ։

ՄՈՒՇԵՂ ԵՊՍ. — Ընկերվարութիւն և Հայ ընկերվարականներ. Գահիրէ. 1910. տպ. Օննիկ Հալէպլեանի. գին 0.75 սանդիմ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ. Եռամեայ Տեղեկագիր, Գահիրէ 1909։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ Ռաշտի Հայոց Գերեզմանատան Յանձնախմբի ներկայացրած Հասարակական ժողովին ի 4-ն Հոկտեմբերի 1909. Թէհրան 1909. տպ. «Փարոս»։

ՍԻՐՕ. — Հայի ճակատագրէն. Պոլիս 1909. տպ. Ջ. Պէրպէրեան. գին 3 ղր։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍի Թղթերը. Բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կոստանեանց։ Աղեքսանդրապօլ տպ. Գէորգ Սանոյեանցի 1910. գինն՝ 2 րուպլի, 5 ֆր. էջ ԽԸ 352։

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼի Օրէնքի և ընկերութեան ղոկերէն Պօսթըն տպ. «Հայրենիք»ի 1909. գինն 25 սէնթ. էջ 63։

---

**ՔԱՅԼԵՐԳ ԴՊՐՈՑԱՍԷՐ** (խօսք Անայիս. եղնկ. Ց. Սինանեան). կը վաճառուի ի նպաստ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան՝ 5 ղրշ.ի Պապը–Ալի–Ճատտէսի Պիպէռճեան գրադարանի և Գում Գարուի Ընկերութեանս վարժարանին մէջ։

---

digitised by A.R.A.R.@

# ՀՈՐԻԶՈՆ

Գրական, քաղաքական, տնտեսական
և
հասարակական լրագիր

## ՏԱՐԵԿԱՆ

| | | |
|---|---|---|
| *Ռուսաստանի համար* | . | 8 *ր.* |
| *Պարսկաստանի* | . . | 9 *ր.* |
| *Թիւրքիայի* | . . . | 120 *ղրշ.* |
| *Ամերիկայ* | . . . | 6 *դօլլար* |
| *Եւրոպայի* | . . . | 30 *ֆր.* |

*Բաժանորդագրութիւն ընդունւում է միայն իւրաքանչիւր ամսի 1ից։ Ապառիկ ո՛չ ոքի թերթ չէ ուղարկւում։*

*Հասցէն՝* Rédaction « Horizou »
TIFLIS (Russie-Caucase)

---

# ԼՈՅՍ

գրական-հասարակական շաբաթաթերթ, որ հրատարակուելու է 1910 թ. յունուարի 1-ից Նոր-Նախիջեւանում։

*«ԼՈՅՍԻ» ՆՊԱՏԱԿՆ է կապ հաստատել Խրիմի, Հիւսիսային Կովկասի, Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի ցրուած հայ գաղութների միջեւ և մասնակից անել նրանց ընդհանուր հայկական կեանքին։*

*« ԼՈՅՍԻ » ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ—Ն.-Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար — տարեկան՝* **3** *ր., կէս տարին՝* 2 *ր.,* 3 *ամիսը՝* 1. *ր. Ռուսաստանի այլ տեղերի համար — տարեկան՝* **4** *ր. կէս տարին* 2 *ր.* 50 *կ. և* 3 *ամիսը՝* 1 *ր.* 50 *կոպ.*

*«ԼՈՅՍԻ» հատով համարն ամէն տեղ արժէ* 10 *կոպ.*

*«ԼՈՅՍ» շաբաթաթերթում ընդունւում են յայտարարութիւններ ձեռնտու պայմաններով ամէն լեզուով։*

*Օտարաքաղաքացիները դիմելու են՝* Нахичеванъ на Дону. Въ редакцію армянскаго еженедѣльнаго журнала « ЛУЙСЪ ».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՔՆ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ

ԱՄՍԱԳԻՐ **Ա Ր Օ Ր** ԱՄՍԱԳԻՐ

*Ընդհանուր-գրականական, գեղարուեստական և գիտական յուխանդակութեամբ*

*«ԱՐՕՐԸ» հրատարակվելու է հետեւեալ ծրագրով.*

I. *Բելլետրիստիկա — վէպեր, վէպիկներ, պատմուածներ — ինքնուրոյն և թարգմանական։*

II. *Հիմնական յօդուածներ քաղաքական, գրականական և գիտական հարցերի մասին։*

III. *Գրականական ընդհանուր տեսութիւններ։*

IV. *Գիտական տեսութիւն։*

V. *Հայկական, ռուսական և օտարազգի մատենագրութիւն, գրախօսութիւն և քննադատութիւն։*

VI. *Արևելագիտութիւն (կովկասագիտութիւն, հայագիտութիւն, վրացագիտութիւն)։*

VII. *Թատրոն և երաժշտութիւն։*

*«Արօրը» բաղկացած է լինելու* 8–10 *տպագրական թերթից (նաքօրից)։*

*« Արօրի » բաժանորդագինն է տարեկան* 6 *ռուբլի, իսկ « Մշակ » լրագրի* **ՏԱՐԵԿԱՆ** *բաժանորդների համար՝ Թիֆլիսում* 3 *ռուբ., Թիֆլիսից դուրս* 4 *ր. Արտասահման՝* 20 *ֆր., իսկ « Մշակի » տարեկան բաժանորդների համար՝* 13 *ֆրանկ։*

Tiflis, Rédaction du journal «Mschak» pour «Aror»

*Թիֆլիս, գրասենեակ «Մշակի» յանձնել «ԱՐՕՐԻՆ»։*

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

---

# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# “ ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ ”

*Վերջին վայրկենիս ստացանք Թէոդիկի Ամենուն Տարեցոյցը. Որ գերազանցապէս կը գերանցանցէ նախորդ տարիները՝ զարդարուած ըլլալով բազմաթիւ դիմանկարներով և ընտիր յօդուածներով։ Կ'արժէ մի միայն ֆր. 3. ղրշ. 12։*

*Դիմել՝* *Théotig, c/o Mrs. & H. Der-Nersessian, Bahdjé Kapou, Djélal Bey Han, Constantinople.*


digitised by A.R.A.R.@

# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԳԵՂՈՒՆԻ»Ն

*Իր սովորական դիրքով 92 մեծադիր էջերով զարդարուած բազմազոյն և բազմաթիւ միագոյն պատկերներով։*

*Խմբագրութիւնը ո՛չ և է ջանք չէ խնայած այնպիսի վիճակի մը մէջ դնելու Գեղունին՝ որ կարենայ ըլլալ եւրոպական ազգերու դիմաց ևս հանելու զայն, որ պիտի մնայ իբր կոթող մը Կիլիկեան որբիկներու վշտին և տառապանքին, և իբրև յուշարձան մը այդ երկրին բազմաթիւ հայ նահատակներուն։*

*Զանց ընելով յիշատակել բազմաթիւ գեղարուեստական նկարները՝ հարկ է ըսել որ կարևոր էջեր նուիրուած են Կիլիկեան դէպքերու պատկերներուն։*

*Գրական բաժինը բոլորովին նորութեամբ մը կը ներկայանայ հայ և օտարազգի ընթերցողներու։ Յօդուածներ ունին, բաց ի ներքին աշխատակիցներէ՝ Ամեն. Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, Ատանայի եպս. Պօղոս Թէրզեան, Դուրեան պատրիարք, Զօպանեան, Օհանեան, Իսկուհի Մինասեան, Շիրվանզադէ, Տիկին Արշակուհի Թէոդիկ, Դանիէլ Վարուժան, Կուրտիկեան, Թ. Եսայեան, Տօքթ Թորգոմեան, Սէյրի, Թորամանեան, Ռ. Սեւակ։ Իսկ օտարազգի գրիչներէ՝ Ֆլամարիոն, Ժիւլ Պուա, Նշանաւոր գրագիտուհին Ատելսֆելտ, Ե. Դեզա, Վիկտ. Աղանուր, Էմէր Պէյ, Սոֆիա Պուբովնիչքա և այլք։*

*Ինչպէս արդէն ծանուցուած է՝ Գեղունիի հասոյթը յատկացուած է Կիլիկիոյ աղէտեալներուն. ըսել է գեղարուեստասէր ազգայիններ Գեղունին ստանալով՝ պիտի փրկեն նաև որբիկի մը կեանքը։*

*Տեսնելով որ բարեսէր և գրասէր ազգայիններ փութացին և կը փութան յղել իրենց անունները (բաժանորդագրուելով «Գեղունի»ի) և տեսնելով որ տպագրուած օրինակները շուտով պիտի սպառին, այսու կը յայտարարենք թէ «Գեղունին» կ'արժէ ֆր. 10, դհկ. 50, — տոլար 2, — րուպլի 4։*

*Բաժանորդագրուողք՝ պէտք է փութան իրենց անունը և հասցէն և գինը յղելու խմբագրութեան, որպէս զի ամէն քաղաք կարենանք փոքրիկ սնտուկներով յղել «Գեղունի» ները՝ առանց վնասուելու բաժանորդաց հասցնելու համար։*

*Ամէն տեղ, ամէն քաղաք և գիւղ՝ թաղականութիւնը կամ երիտասարդութիւնը պէտք է աշխատի բարեսիրտ ազգայիններուն լումաները հաւաքելու (այսինքն Գեղունիին ստորագրուիլ տալու և անոնց անունները խմբագրութեան յղելու, որպէս զի այդ մարմիններուն ուղղեմք ապսպրուած Գեղունիները)։*

*Վստահ ենք որ բարեսիրտները գոհ պիտի մնան իրենց ըրած բարերարութեան վրայ, երբ իրենց առջև ունենան Գեղունին. Եւ մանաւանդ երբ իմանան թէ այդ Գեղունին Հայ կեանք մը փրկած է սովէն։*

*Դիմել ուղղակի*

Rédaction de l' Illustration

**" Kéghouni "**

S. Lazare — VENISE (Italie)

*Յ. Գ. Վասն զի ամէն կողմէ գործակալներ և գրավաճառներ դիմումներ կ'ընեն մեզ «Գեղունին» վաճառելու պայմանները ուզելով, կը յայտարարենք թէ 10 0/0 միայն կրնանք տալ անոնց՝ որոնք կը կանխեն դրամը յղել։*

digitised by A.R.A.R.@